Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N9 -ՀԽ

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

01.03.2017թ. ք.Երևան
ժամը 16^{00}

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Խ.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ.Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ
Վ.Հակոբյան «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական ՀԿ նախագահ
Լ.Թասալյան «Գիտակցիր իրավունքդ» իրավապաշտպան ՀԿ գործադիր տնօրեն
Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Ռ.Խաչատրյան «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի» նախագահ
Ս.Ադամյան «Էկոլոգիական հասարակական միություն» ՀԿ նախագահ
Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ
Ա.Համբարձումյան «Խազեր» էկոլոգոմշակութային ՀԿ նախագահ
Ա.Համբարձումյան «Հասարակական ձայն» /Civil Voice/ ՀԿ ներկայացուցիչ
Ս.Այվազյան Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
Հ.Ալոյան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» անդամ
Ա.Վարդանյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

Ա. Միսակյանը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
Ա. Դաշյանը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
Ա.Աղասյան Կենսառեսուրսների կառավարման գործակալություն
Ա.Բեգլարյան Բնապահպանական պետական տեսչություն

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Գետառ և Հրազդան սելավատարների և Երևանի սելավընդունիչների խնդիրները:
Զեկուցող՝ Ամալյա Միսակյան, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն

2.Էկոլոգիական օրենսդրության զարգացման առաջնահերթությունները:

Զեկուցող՝ Աիդա Իսկոյան, «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ

3.Գայլերի թվաքանակի կարգավորման այլընտրանքային գիտական մոտեցում

Զեկուցող՝ Ռուբեն Խաչատրյան, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամ

ՀԱՐՑ 1.

Ելույթով հանդես եկավ Խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը-Ամփոփելով նախորդ նիստում գիտական հաստատությունների մասնագետների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի և "Վեոլիա Ջուր" ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ կազմակերպված քննարկումների արդյունքները՝ շեշտեց, որ խնդրի բազմակողմանի դիտարկման նպատակով անհրաժեշտություն էր առաջացել ծանոթանալ նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դիրքորոշմանը:

Ելույթով հանդես եկավ Ամալյա Միսակյանը-Տեղեկացնելով, որ ձմռան ամիսներին որոշ հատվածներում գրանցվել են նորմայից մի քանի անգամ ավել տեղումներ, հայտնեց, որ ջերմաստիճանի կտրուկ բարձրացման և հորդառատ անձրևների դեպքում մի շարք գետերում, այդ թվում՝ Հրազդան գետի մերձափնյա շրջաններում հնարավոր են ջրածածկումներ և ողողումներ, որոնց վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր է անել միայն 3-4 օր առաջ, երբ հստակ տվյալներ կլինեն մոտեցող տաք օդային հոսանքների ու դրանց ուղեկցող ինտենսիվ անձրևների մասին:
Ելույթով հանդես եկավ Ա.Դաշյանը- Հայտնեց, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը մշակել և ներկայացրել է առաջարկներ հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ բնակավայրերը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ: Բանախոսներն իրենց ելույթներում արձանագրել են հնարավոր հեղեղումների բարձր ռիսկը:

Ելույթով հանդես եկավ Խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը- Կարևորելով խնդրին հիմնարար և համակարգային լուծում տալը, միաժամանակ օրախնդիր համարեց ներկայում ստեղծված իրավիճակին և հնարավոր ռիսկերին օպերատիվ արձագանքելու ու կանխարգելիչ գործողությունների իրականացումը:Առաջարկեց հասարակական խորհրդի անունից դիմել գործադիրին՝ միջգերատեսչական հանձնաժողով ձևավորելու առաջարկով, որում պետական մարմիններից զատ կառաջարկվեն նաև ընդգրկել Երևանի քաղաքապետարանի մասնագետներին, ոլորտի գիտնականներին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին /միջազգային փորձը ներկայացնելու նպատակով/:
Ելույթով հանդես եկավ Աիդա Իսկոյանը -ներկայացրեց էկոլոգիական օրենսդրության զարգացման առաջնահերթությունները: Բանախոսը թվարկեց էկոլոգիական օրենսդրության առանձնահատկությունները և հայտնեց, որ կան բնապահպանական առանձին ոլորտներ, որոնք օրենսդրորեն կարգավորված չեն:

Առաջարկով հանդես եկավ Խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը - Առաջարկեց մասնագետների հետ քննարկումների արդյունքում ներկայացնել անհրաժեշտ օրենքների ցանկը, ինչի ուղղությամբ հետագայում կծավալվեն հետևողական աշխատանքներ:

Ելույթով հանդես եկավ Ռուբեն Խաչատրյանը- ներկայացրեց գայլերի թվաքանակի կարգավորման այլընտրանքային գիտական մոտեցում, ինչը նվազագույնի կհասցնի որսալու միջոցի կիրառումը: Նախաձեռնությունը հավանության է արժանացել բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից:
Առաջարկով հանդես եկավ Խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը -Առաջարկեց մոտեցումը գրավոր ներկայացնել, որպեսզի կազմակերպվի մասնագիտական քննարկում՝ նրա արդյունավետությունը գնահատում՝ առկա իրավիճակում մեթոդի կիրառման նպատակահարմարությունը որոշելու համար:

Որոշվեց

Դիմել նաև Երևանի քաղաքապետարանին և ՀՀ տարածքային զարգացման և կառավարման նախարարությանը՝ իրականացնելու իրավիճակին համահունչ օպերատիվ միջոցառումներ հնարավոր ռիսկերին դիմակայելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

Արձանագրեց
Ա.Սուքիասյանը